



ՄՑԵՆԱՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Տեխնիկական պատվիրակի տարբերակ



© Համաշխարհային Հմտություններ Միջազգային Կազմակերպություն 2011
ՀՀՄԿ2011_սցենարի_պատրաստում_ՏՊ_ՀՀՄԿ2011

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՑԵՆԱՐ – ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար N:01

Կարգ- փորձագետ

Անվաստահություն կամ մշակույթային տարբերություն

Ա երկրի փորձագետին ճանաչում էին որպես ինքնատիպ և ինքնամփոփ անձնավորություն: Նա կատակներին չէր արձագանքում, և թվում էր շատ անմատչելի:

Մրցույթի առաջին օրը Բ երկրի փորձագետը նկատեց, որ Ա երկրի փորձագետը բավական երկար ժամանակ է ծախսում դիտելու Բ երկրի մրցակցին և հաճախ նրան շատ մոտ է նստում: Այս իրավիճակը Բ երկրի փորձագետին դրել էր անհարմար կացության մեջ, բայց քանի որ Ա երկրի փորձագետը սխալ արարք չէր անում, նա չգիտեր՝ ինչպես վարվել:

Օրվա ընթացքում մի պահ Ա երկրի փորձագետն աթոռը մոտեցրեց, բարձրացրեց ոտքերը և դրեց Բ երկրի մրցակցի աշխատանքի վրա: Բ երկրի փորձագետը մտածեց, որ Ա երկրի փորձագետը լավ օրինակ չի ծառայում մյուս բոլոր փորձագետների և, որ ամենակարևորն է, մրցակիցների համար:

Բ երկրի մրցակիցը նույնպես իր թիմային առաջնորդին տեղեկացրել էր, որ իրեն խանգարում է Ա երկրի փորձագետի՝ իր կարծիքով չափից ավել ուշադրությունը:

Քննարկեք և համաձայնեցրեք ստորև ներկայացված հարցերը կապված այս սցենարի հետ.

- Մրցույթի ո՞ր կանոններն են (եթե կան) վերաբերում այս սցենարին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն համապատասխան գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի Բ երկրի փորձագետը
- Ի՞նչ հարցեր պետք է հաշվի առնել նման խնդրի լուծման համար:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՑԵՆԱՐ - ԱԶԱԿՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար N: 01

Կարգ - փորձագետ

Քննարկման կետ 1

Մրցույթի համապատասխան կանոն(ները)

6.1.22. թվարկված 7-րդ կետը

Մրցակիցներն իրավունք ունեն ակնկալելու, որ պաշտոնատար անձանց կամ հանդիսատեսի կողմից չի լինի չափից շատ միջամտություն, որը կխանգարի նրանց (մրցակիցներին) ավարտել իրենց փորձարկման նախագիծը:

6.3.3 Անձնական հատկանիշներն ու էթիկայի չափանիշները

Փորձագետները պետք է լինեն առավելագույնս ազնիվ անձինք: Նրանք պետք է լինեն ազնիվ, օբյեկտիվ, արդար և պատրաստ համագործակցության:

Քննարկման կետ 2 - առաջարկվող գործողություններ

- Մի հանդուրժեք այդտեսակ վերաբերմունք, քանի որ դուք ձեր մրցակցի նկատմամբ ունեք հոգատարության պարտավորություն
- Գրանցեք այն դեպքերը, երբ զգում եք, որ փորձագետի վարքագիծն անընդունելի է
- Ձեր մտահոգությունը քննարկեք գլխավոր փորձագետի հետ և խնդրեք նրանից իրավիճակին արագ լուծում տալ
- Գլխավոր փորձագետի հետ ձեր քննարկումից հետո հավաստիացեք, որ հարցը լուծվել է և վարքագիծը՝ փոխվել
- Եթե դուք դժգոհ եք տեսնելով, որ տրված որոշակի ժամանակահատվածում ոչինչ չի փոխվել, ապա այդ հարցը նորից քննարկեք գլխավոր փորձագետի հետ: Պատրաստ եղեք այդ հարցը բարձրացնել ուղղակիորեն ձեր ժյուրիի նախագահի կամ ձեր երկրի/տարածաշրջանի տեխնիկական պատվիրակի հետ քննարկման համար

Քննարկման կետ 3 - առաջարկվող գործողություններ

- Մշակույթի հնարավոր տարբերությունները կարող են հանգեցնել ընդունելի վարքագծի տարբեր մեկնաբանումների
- Միշտ հնարավոր համարեք, որ սխալ արարքները կարող են կատարվել առանց “մտածելու” և առանց թաքուն մտադրության:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՅԵՆԱՐ-ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻՎ

Սցենար N:02

Կարգ - գլխավոր փորձագետ

Մասշտաբի շեղում-գլխավոր փորձագետի տեսանկյունից

Ա երկրի մրցակիցը վշտացած է, նա հասկացել է, որ փորձարկման ծրագրում սխալ է թույլ տվել, քայց հավատացած է, որ ոչ իր մեղքով:

Իրեն տրված գծագրում մասշտաբը նշված է 1:1 հարաբերությամբ, իր փաստացի չափով: Տվյալ արհեստի փորձարկման նախագծերի գծագրերը շատ քիչ մեծություններ են պարունակում և դա իրենց պրակտիկան է, չափերը վերցնել քանոնով, ուղղակիորեն գծագրից, որտեղ մեծությունները հատկորոշված չեն:

Ա երկրի փորձագետը հասկացավ, որ գծագրի պատճենահանման ժամանակ, գծագիրը պատահաբար մեծացվել է, ուստի իրենց մրցակցին տրված գծագիրը, անշուշտ, չի համապատասխանում նշված 1:1 հարաբերությամբ մասշտաբին: Այս սխալի արդյունքում մրցակիցն իր փորձարկման նախագծի մի մասը սխալ է կատարել:

Սակայն այդ նույն սխալ մեծացրած գծագիրը տրվել է մյուս մրցակիցներին նույնպես, որոնք նկատել են տվյալ սխալը և անհրաժեշտ ուղղումներ են կատարել իրենց հաշվարկներում, որպեսզի տվյալ բաղադրամասը ճիշտ լինի:

Ա երկրի փորձագետն անմիջապես իրավիճակը ներկայացնում է գլխավոր փորձագետին:

Քննարկեք և համաձայնեցրեք ստորև ներկայացված հարցերը կապված այս սցենարի հետ.

- Մրցույթի ո՞ր կանոններն են (եթե կան) վերաբերում այս սցենարին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն համապատասխան գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի գլխավոր փորձագետը
- Ի՞նչ հարցեր պետք է հաշվի առնել նման խնդրի լուծման համար:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՅԵՆԱՐ- ԱԶԱԿՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար N:02

Կարգ - գլխավոր փորձագետ

Քննարկման կետ 1

Մրցույթի համապատասխան կանոն(ները)

6.1.22 Մրցակիցներ-ազնվություն, արդարություն և թափանցիկություն

Մրցակիցները մրցույթի ժամանակ իրավունք ունեն ակնկալելու արդար և ազնիվ վերաբերմունք, հետևյալ հարցի վերաբերյալ՝

- Պարզ և աներկմիտ հրահանգներ

Քննարկման կետ 2-առաջարկվող գործողություններ

- Գլխավոր փորձագետն այս խնդիրը չպետք է անմիջապես քննարկի իր ժյուրիի կազմի մյուս փորձագետների հետ, քանի որ այս իրավիճակի համար արդար լուծում փնտրելը կարող է հասցնել կողմնակալության: Դա կարող է չբավարարել մյուս փորձագետներին, որոնց մրցակիցները նկատել էին սխալը և անհրաժեշտ ուղղումը կատարել
- Գլխավոր փորձագետը պետք է անմիջապես խորհրդի համար դիմի ժյուրիի նախագահին, այս արտակարգ իրավիճակի դեպքում արդարացի լուծում ստանալու համար:
- Գլխավոր փորձագետը չպետք է փորձի լուծել այս խնդիրն առանց ժյուրիի նախագահի

Քննարկման կետ 3 –առաջարկվող գործողություններ

- Ինչպես է զգում Ա երկրի մրցակիցը: Մրցակցին չէին տեղեկացրել, որ մրցույթի գնահատման և միավորների նշանակման մի մասը գծագրի մասշտաբի ստուգումն է և իրեն տրված տեղեկատվությունը համարել էր ճիշտ ու “բարեխղճորեն” վերացրել էր այն: Մրցակիցն իրեն խաբված կզգար, եթե սխալ մեկնաբանվեր:
- Մյուս փորձագետների տակտիկական դիրքը: Նրանց հնարավոր է չգոհացնի այս իրավիճակը միայն մեկ մրցակցի համար լուծելը:
- Տեղին կլինի նաև խոսել մրցակցի թիմայի առաջնորդի հետ, եթե մրցակիցը շատ վշտացած է:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՅԵՆԱՐ-ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻՎ

Սցենար N:03

Կարգ-ժյուրիի նախագահ

Մասշտաբի շեղում - ժյուրիի նախագահի տեսանկյունից

Ա երկրի մրցակիցը վշտացած է, նա հասկացել է, որ փորձարկման ծրագրում սխալ է թույլ տվել, քայց հավատացած է, որ ոչ իր մեղքով:

Իրեն տրված գծագրում մասշտաբը նշված է 1:1 հարաբերությամբ, իր փաստացի չափով: Տվյալ արհեստի փորձարկման նախագծերի գծագրերը շատ քիչ մեծություններ են պարունակում և դա իրենց պրակտիկան է, չափերը վերցնել քանոնով, ուղղակիորեն գծագրից, որտեղ մեծությունները հատկորոշված չեն:

Ա երկրի փորձագետը հասկացավ, որ գծագրի պատճենահանման ժամանակ, գծագիրը պատահաբար մեծացվել է, ուստի իրենց մրցակցին տրված գծագիրը, անշուշտ, չի համապատասխանում նշված 1:1 հարաբերությամբ մասշտաբին: Այս սխալի արդյունքում մրցակիցն իր փորձարկման նախագծի մի մասը սխալ է կատարել:

Սակայն այդ նույն սխալ մեծացված գծագիրը տրվել է մյուս մրցակիցներին նույնպես, որոնք նկատել են տվյալ սխալը և անհրաժեշտ ուղղումներ կատարել իրենց հաշվարկներում, որպեսզի տվյալ բաղադրամասը ճիշտ լինի:

Ա երկրի փորձագետն անմիջապես իրավիճակը ներկայացնում է գլխավոր փորձագետին, որն իր հերթին դիմում է ժյուրիի նախագահին:

Քննարկեք և համաձայնեցրեք ստորև ներկայացված հարցերը կապված այս սցենարի հետ.

- Մրցույթի ո՞ր կանոններն են (եթե կան) վերաբերում այս սցենարին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն համապատասխան գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի ժյուրիի նախագահը
- Ի՞նչ հարցեր պետք է հաշվի առնել նման խնդրի լուծման համար:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՅԵՆԱՐ - ԱԶԱԿՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար N: 03

Կարգ-Ժյուրիի նախագահ

Քննարկման կետ 1

Մրցույթի համապատասխան կանոնները

6.1.22 Մրցակիցներ-ազնվություն, արդարություն և թափանցիկություն

Մրցակիցները մրցույթի ժամանակ իրավունք ունեն ակնկալելու արդար և ազնիվ վերաբերմունք, հետևյալ հարցի հետ կապված՝

- Պարզ և աներկմիտ հրահանգներ

Քննարկման կետ 2-առաջարկվող գործողություններ

- Ժյուրիի նախագահը պետք է խորհուրդ տա գլխավոր փորձագետին անմիջապես չքննարկել այդ հարցն իր ժյուրիի կազմի մյուս փորձագետների հետ, քանի որ այս իրավիճակի համար արդարացի լուծում գտնելու փորձը կարող է հանգեցնել կողմնակալության: Մյուս փորձագետներին հնարավոր է չգոհացնի այս իրավիճակը միայն մեկ մրցակցի համար լուծելը:
- Ժյուրիի նախագահը և գլխավոր փորձագետը պետք է համաձայնության գան, գտնելով արդար լուծում, որ ըստ էության չեզոքացնում է այդ սխալի համար նախանշված գնահատականների տարբերակը բոլոր մրցակիցների համար: (օրինակ՝ զրո միավոր բոլորի համար կամ 1 միավոր բոլորի համար):
- Նախքան այս որոշման կայացնելը ժյուրիի նախագահը պետք է հավանություն ստանա տեխնիկական հանձնաժողովի նախագահից և փոխնախագահից:
- Ժյուրիի նախագահը, գլխավոր փորձագետի օգնությամբ պետք է այս իրավիճակի մասին տեղեկացնի ժյուրիի մյուս անդամներին, ինչպես նաև պետք է տեղեկացնի, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկել այս սխալի համար:

Քննարկման կետ 3- առաջարկվող գործողություններ

- Ինչպե՞ս է զգում Ա երկրի մրցակիցը: Մրցակցին չէին տեղեկացրել, որ մրցույթի գնահատման և միավորների նշանակման մի մասը գծագրի մասշտաբի ստուգումն է և իրեն տրված տեղեկատվությունը համարել էր ճիշտ ու “բարեխղճորեն” վերացրել էր այն: Մրցակիցն իրեն խաբված կզգար, եթե սխալ մեկնաբանվեր:

Մյուս փորձագետների տակտիկական դիրքորոշումը: Նրանց չէր գոհացրել այս իրավիճակը լուծել միայն մեկ մրցակցի համար:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՅԵՆԱՐ-ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻՎ

Սցենար N: 04

Կարգ - գլխավոր փորձագետ

Իրավիճակն ընդհանուր առմամբ

Ա երկրի մրցակիցը շատ լավ է աշխատել և ավարտել է իր փորձարկման նախագիծը տեխնիկական նկարագրով սահմանված պրոցեսներին համապատասխան: Բ երկրի մրցակիցը նույնպես հաջողությամբ է ավարտել իր փորձարկման նախագիծը, սակայն մրցույթի վերջին օրը մի քանի փորձագետ նկատել են, որ նա չի օգտագործել հատկորոշված գործընթացը կամ գործիքը, աշխատանքն ավարտելու համար: Այս երկու մրցակիցները ոսկե մեդալի հավակնորդներ են:

Այն գործընթացը և գործիքները, որոնք պետք է օգտագործվեն փորձարկման նախագծի այս ասպեկտի համար, հստակ ներկայացված են տեխնիկական նկարագրում, որպես “ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՕԳՏԱԳՈՐԾԵԼ”: Բայց երբ հարցը վերաբերում է միավորների նշանակմանը, Ա երկրի փորձագետը նկատեց, որ միավորների սանդղակով հաշվի է առնվում միայն վերջնական պատրաստաի արտադրանքի չափանիշները և ոչինչ կապված չէ հատկորոշված գործընթացներով աշխատելու հետ:

Քննարկեք և համաձայնեցրեք ստորև ներկայացված հարցերը կապված այս սցենարի հետ.

- Մրցույթի ո՞ր կանոններն են (եթե կան) վերաբերում այս սցենարին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն համապատասխան գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի փորձագետը
- Ի՞նչ հարցեր պետք է հաշվի առնել նման խնդրի լուծման համար:

ՄՐՑՈՒՑԹԻ ՍՅԵՆԱՐ- ԱԶԱԿՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար N:04

Կարգ - Փորձագետ

Քննարկման կետ 1

Մրցույթի համապատասխան կանոններ

6.3.5 Փորձագետի պատասխանատվությունները

Մրցույթի ընթացքում

Նախքան մրցույթի սկսելը, փորձագետներն աջակցում են գլխավոր փորձագետին նախապատրաստելու փորձարկման նախագծի ենթաչափանիշների ասպեկտների և յուրաքանչյուր ենթաչափանիշի ասպեկտի համար հատկացվող միավորների մանրամասները:

Քննարկման կետ 2 - առաջարկվող գործողություններ

- Նախնական կարծիքն այն է, որ Ա երկրի փորձագետն իրավունք ունի առարկելու տվյալ իրավիճակի համար, սակայն իր պարտավորությունն է, նախքան մրցույթը երաշխավորել, որ առկա է պատշաճ հարաբերակցություն այն իրավասությունների մեջ, որոնք ներկայացված են տեխնիկական նկարագրում և որոնք փաստացի առկա են միավորների սանդղակում: Մրցույթի ընթացքում, եթե նույնիսկ իրավասությունը լուսաբանված է տեխնիկական նկարագրում, բայց չի արտացոլված միավորների սանդղակում, ինչպես այս սցենարում է, ոչինչ հնարավոր չէ անել փոփոխություններ կատարելու համար:

Քննարկման կետ 3 –առաջարկվող գործողություններ

- Ինչպես է իրեն զգում Ա երկրի մրցակիցը: Մրցակիցը նույնպես կարող է լավ տեղյակ լինել, որ իր ամենաուժեղ մրցակիցը ճիշտ գործընթացին չի հետևել, և կարող է իրեն տուժող համարել, որ այդ ամենը կատարվել է առանց տուգանման: Եթե մրցակիցը վրդովվում է, ապա պետք է հրավիրել այդ մրցակցի թիմային առաջնորդին
- Մի շտապեք, և մինչև մրցույթի սկսելը հավաստիացեք, որ որպես փորձագետ ձեզ կբավարարի այն ամենը, ինչի համար դուք համաձայնության եք գալիս կապված գնահատման սանդղակի հետ:

ՄՐՑՈՒՑԹԻ ՍՑԵՆԱՐ- ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար N:05

Կարգ - Ժյուրիի նախագահ

Տակտիկական միջամտություն - Ժյուրիի նախագահի տեսանկյունից

Վարսահարդարության հմտության փորձագետներից մեկը դիմում է ձեզ խորհրդի համար՝ մրցույթի երրորդ օրը պատահած դեպքի առնչությամբ: Վարսահարդարության մրցույթի միավորների սանդղակը նախատեսում է, որ եթե որևէ փորձագետ, որևէ բան է ասում իր համաերկրացի մրցակցին մրցույթի ընթացքում, ապա տվյալ մրցակիցը կորցնում է մեկ միավոր: Ողջ ժյուրիի կազմը համաձայնել են այս մոտեցման հետ նախքան մրցույթը՝ ֆորումի միջոցով, և որից հետո այն գրվել է միավորների սանդղակում:

Բ երկրի փորձագետը միայն մեկ անգամ տեսնում է, որ Ա երկրի փորձագետը միայն մեկ բառ ասաց Ա երկրի մրցակցին: Տվյալ բառը “կարճ” բառն էր:

Բ երկրի փորձագետը այդ խախտման մասին փաստում է Ա երկրի փորձագետին, որն անմիջապես ներողություն է խնդրում, և ընդունում, որ իր մրցակիցը տվյալ խախտման համար պետք է կորցնի մեկ միավոր: Այնուամենայնիվ, Բ երկրի փորձագետը տեսավ նաև, որ Ա երկրի մրցակիցը, լսելով կարճ բառը, մանեկենի մազերն ավելի կարճ կտրեց: Եթե Ա երկրի մրցակիցն այդ փոփոխությունը չկատարեր, ապա կորցնելու էր 6 միավոր տվյալ չափանիշը չբավարարելու համար: Բ երկրի փորձագետն իր մտահոգությունն անմիջապես ներկայացնում է ձեզ, ասելով որ սա սխալ չէր այլ տակտիկական միջամտություն, որի միջոցով Ա երկրի փորձագետը գիտակցաբար զոհաբերում է իր մրցակցի 1 միավորը, որպեսզի պահպանվի մնացած 5 միավորը: Գլխավոր փորձագետը հստակ չի պատկերացնում, թե ինչ կարելի է անել այդ չհիմնավորված պնդումի համար և դիմում է Ժյուրիի նախագահի օգնությանը:

Քննարկեք և համաձայնեցրեք ստորև ներկայացված հարցերը կապված այս սցենարի հետ.

- Մրցույթի ո՞ր կանոններն են (եթե կան) վերաբերում այս սցենարին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն համապատասխան գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի Ժյուրիի նախագահը
- Ի՞նչ հարցեր պետք է հաշվի առնել նման խնդրի լուծման համար:

ՄՐՑՈՒՅԹԻ ՄՑԵՆԱՐ- ԱԶԱԿՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար N: 05

Կարգ-Ժյուրիի նախագահ

Քննարկման կետ 1

Մրցույթի համապատասխան կանոնները

6.3.15 Էթիկայի կանոնների խախտումը

Եթե փորձագետը խախտում է կանոնները, ապա նա ենթակա է բաժին 15-ով նախատեսված կարգապահական գործընթացին

9.2 Գերակայություն

Տեխնիկական նկարագիրը չի կարող գերակա լինել մրցույթի կանոնների նկատմամբ: Անհամապատասխանության բոլոր դեպքերում մրցույթի կանոնները գերակա են:

6.3.14 Քննարկման ֆորումում կայացված որոշումներ

Քննարկման ֆորումում, մրցույթի կազմակերպման ժամանակահատվածում, կատարված որոշումներն ուժի մեջ են, եթե այդ որոշումները կատարվել են մրցույթի կանոններին համապատասխան:

6.3.9 Հաղորդակցում համաերկրացի մրցակցի հետ

Ոչ մի այլ դեպքերում հաղորդակցում չի թույլատրվում, բացառությամբ ոչ համաերկրացի փորձագետի ներկայությամբ:

6.9.4. Պատասխանատվություններ-Ժյուրիի նախագահ

Ցանկացած հարց, որը չի կարող լուծվել ժյուրիի կողմից, պետք է դրվի քննարկման ժյուրիի նախագահի կողմից, ժյուրիի նախագահի հաջորդ ժողովին: Անհրաժեշտության դեպքում այդ ժողովներին կմասնակցեն գլխավոր փորձագետն ու թարգմանիչը:

Ժյուրիի նախագահները և գլխավոր փորձագետները պետք է հսկեն իրենց փորձագետների աշխատանքի որակը, և տեխնիկական հանձնաժողովի: Նախագահին և փոխնախագահին խորհուրդ տան, որ այն փորձագետը, որն անհամատեղելի է, չնշանակվի հաջորդ մրցույթի համար:

Քննարկման կետ 2-առաջարկվող գործողություններ

- Որպես ժյուրիի նախագահ դուք պետք է այս հարցը քննարկեք գլխավոր փորձագետի և գլխավոր փորձագետի տեղակալի հետ
- Եթե որոշում չի կայացվում տեղում, ապա այն պետք է ներկայացվի լսումների հանձնաժողովի նախագահին:
- Արդյո՞ք հավատարիմ են մնացել միավորների սանդղակին
- Արդյո՞ք փորձարկման նախագծի այդ բաժնի համար տրված բոլոր գնահատականները պետք է հանվեն
- Արդյո՞ք դա մրցույթի կանոնների միտումնավոր խախտում էր:

Քննարկման կետ 3-առաջարկվող գործողություններ

- Արդար վերաբերմունք բոլոր մրցակիցների նկատմամբ
- Ժյուրիի նախագահը պետք է հասկանա տվյալ հմտության միավորների սանդղակը և միավոր շնորհելու գործընթացը
- Ժյուրիի նախագահը, գլխավոր փորձագետի և գլխավոր փորձագետի տեղակալի աջակցությամբ պետք է հավաստիանան, որ փորձարկման նախագծի համար օգտագործվող միավորների շնորհման համակարգն ու գործընթացը ազատ են կողմանակալությունից և կանխակալ կարծիքից, ազդեցության օգտագործումից, հատուկ վերաբերմունքից, անհատի անհատական անազնվությունից և անփութությունից: Յուրաքանչյուր և բոլոր փորձերի ազդեցությունը հոգուտ մրցակցի օգտագործելու, պետք է դիմագրավվի և այդ մասին զեկուցվի ժյուրիի նախագահին:
- Այդ հմտության պատմությունը-արդյո՞ք սա է եղել նորմալ գործընթացը:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՅԵՆԱՐ-ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻՎ

Սցենար N: 06

Կարգ - Ժյուրիի նախագահ

Կարծիքի տարբերություն

Գլխավոր փորձագետը միավորների սանդղակի իր առաջարկն է ներկայացնում փորձագետների հանձնաժողովին, ուղղակի մրցույթը սկսելուց առաջ: Առաջարկը համապատասխանում է տեխնիկական նկարագրին և ներառում է չափանիշների բոլոր ասպեկտների միավորները (մանրամասն սանդղակով):

Ա երկրի մի նոր փորձագետ այնուամենայնիվ առարկում է և ներկայացնում իր երկրի առաջարկը: Գլխավոր փորձագետը ընդգծում է, որ այդ նոր առաջարկը չի համապատասխանում տեխնիկական նկարագրին, ինչպես նաև տեղեկացնում է Ա երկրի փորձագետին առ այն, որ իր կողմից առաջարկված փոփոխությունները վարույթի այդ պահին, կնշանակի մրցույթի կանոնների խախտում: Ա երկրի փորձագետը նշում է, որ իր երկիրը հմտության տվյալ ոլորտի առաջատար է: Մեկ անգամ ևս, գլխավոր փորձագետը մատնանշում է, որ ինքը և փորձագետների հանձնաժողովը պարտավոր են հետևել տեխնիկական նկարագրով նախատեսված միավորների սանդղակին և որ նա չի կարող փոխել այն տվյալ մրցույթի համար: Գլխավոր փորձագետը առաջարկում է քննարկել նոր առաջարկները մրցույթը սկսելուց հետո և համաձայնության գալ հնարավոր փոփոխությունների շուրջ, հաջորդ մրցույթի համար:

Նոր փորձագետը շարունակում է վիճել և կասկածի տակ է դնում գլխավոր փորձագետի մասնագիտական կարողությունները: Ա երկրի փորձագետը ստիպում է երկու այլ փորձագետի աջակցեն իրեն՝ անմիջապես փոփոխություն կատարելու իր մրցարշավում և շատ ժամանակ է վատնվում: Այդ պահին գլխավոր փորձագետի տեղակալը բացակայում է քանի որ նա այդ նախա-մրցույթային օրը արտադրամասի վերահսկիչի հետ գնացել է տեղական գործարան այցելության: Գլխավոր փորձագետը զանգահարում է ժյուրիի նախագահին՝ նրա օգնությունը ստանալու համար:

Քննարկեք և համաձայնեցրեք ստորև ներկայացված հարցերը կապված այս սցենարի հետ.

- Մրցույթի ո՞ր կանոններն են (եթե կան) վերաբերում այս սցենարին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն համապատասխան գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի ժյուրիի նախագահը
- Ի՞նչ հարցեր պետք է հաշվի առնել նման խնդրի լուծման համար:

ՄՐՑՈՒՑԹԻ ՍՑԵՆԱՐ - ԱԶԱԿՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար N:06

Կարգ-ժյուրիի նախագահ

Քննարկման կետ 1

Մրցույթի համապատասխան կանոնները

9.4. Թարմացում և վավերացում

Մրցույթի յուրաքանչյուր փուլում տեխնիկական նկարագրերը թարմացվում են փորձագետների կողմից՝ ներառելու համար ամենավերջին տեխնիկական առաջընթացները, և ներկայացվում են քարտուղարություն: Տեխնիկական նկարագրերը պետք է թարմացվեն և վավերացվեն մրցույթի առնվազն 80% փորձագետների ստորագրությամբ: Եթե տվյալ գործընթացը չի իրականացվում, ապա գործող տեխնիկական նկարագիրն ուժի մեջ կմնա հաջորդ մրցույթի համար: Տեխնիկական նկարագրի թարմացումը պետք է կատարվի մինչև C+1 օրվա երեկոյան ժամը 16:00-ը: Բացառությունները պետք է նախապես համաձայնեցվեն տեխնիկական հանձնաժողովի նախագահի և գործադիր տնօրենի հետ:

11.5.5 Գնահատման չափանիշները

Բոլոր փորձարկման նախագծերը պետք է ունենան միավորների սանդղակ, որը համապատասխանում է գնահատման չափանիշներին, ինչպես ներկայացված է տեխնիկական նկարագրում, ինչպես նաև ենթա-չափանիշների ասպեկտների մանրամասն ցուցակը, որը բնորոշված է օբյեկտիվ գնահատման ձևաչափերի (եթե տեղին է) և սուբյեկտիվ գնահատման ձևաչափերի վրա:

9.5. Շրջանառություն

Տեխնիկական նկարագրին վերաբերող բոլոր քննարկումներն ու առաջարկությունները պետք է շրջանառվեն բոլոր անդամներին, առնվազն 12 ամիս նրանց իրականացումից առաջ:

Քննարկման կետ 2-առաջարկվող գործողություններ

- Ժյուրիի նախագահը պետք է նորից ու նորից կրկնի մրցույթի համապատասխան կանոնները ժյուրիի բոլոր անդամների համար, պարզաբանելով, թե երբ և որտեղ կարելի է փոփոխություններ կատարել ՀՀՄԿ Մրցույթի Տեխնիկական նկարագրում:
- Ժյուրիի նախագահը պետք է նորից ու նորից կրկնի ժյուրիի բոլոր անդամներին, որ նման հարցերը մշակում պահանջող խնդիրներ են, և որ որևէ մեկի մասնագիտական կարողությունների մասին դիտողություններն անընդունելի են:
- Ժյուրիի նախագահը պետք է փաստարկի գլխավոր փորձագետի տեղակալին և արտադրամասի վերահսկիչին, որ մրցույթի նախապատրաստումը գերակա է այլ խնդիրների նկատմամբ:

Քննարկման կետ 3-առաջարկվող գործողություններ

- Ժյուրիի նախագահը պետք է հավաստիանա, որ գլխավոր փորձագետն իր առաջարկված միավորների սանդղակը չի ներկայացնում որպես ավարտուն (*fait de complir*) և հրավիրի համաձայնության:
- Ժյուրիի նախագահը պետք է աջակցի գլխավոր փորձագետին, բայց նաև հավաստիանա, որ ժյուրիի անդամների մոտ բացասական զգացումներ չեն մնացել, որոնք հնարավոր ազդեցություն կունենան գլխավոր փորձագետի համար կատարվող հետ-մրցութային քվեարկության վրա:

ՄՐՑՈՒՅԹԻ ԹԵՐԹԻԿ-ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար N: 07

Կարգ- փորձագետ

Անպատեհ ճնշում

Մրցույթի երրորդ օրն է, մրցակիցները իրենց տեղերում են և արդեն երեկո է:

Մի շարք հարցեր են քննակմվել և դրանց լուծումը երկար ժամանակ է պահանջել, ուստի տվյալ հմտության ժյուրիի նախագահը շահագրգռված է, որպեսզի տվյալ օրվա համար գնահատականները ստորագրվեն:

Ա երկրի նոր փորձագետին խնդրում են աչքի անցկացնել իր մրցակցի համար գնահատման թերթիկները:

Միավորները ուսումնասիրելիս Ա երկրի փորձագետը զարմացավ, տեսնելով, որ իր մրցակցի ինչ-որ մի հատվածի համար նշանակվել էր ցածր միավոր: Սա այո և ոչ հանձնարարություն էր, որ իր կարծիքով իր մրցակիցը պետք է կատարած լիներ առանց որևէ խնդրի, նա խնդրեց աշխատանքի լրացուցիչ ապացույցներ և ստուգելու ընթացքում սկսեց վիճել, որ սուբյեկտիվ գնահատականներ են նշանակվել այն դեպքում, երբ գնահատման տվյալ մասի համար պետք է լիներ օբյեկտիվ նիշ: Այնուհետև, գլխավոր փորձագետը նրան տեղեկացրեց, որ նա պետք է ստորագրի միավորների թերթիկը, հակառակ դեպքում, իր մրցակիցը կկորցնի միավորներ: Դժգոհ և հոգնած այս իրավիճակից, նա փորձեց կապվել իր տեխնիկական պատվիրակի հետ, որը սակայն անհասանելի էր: Ա երկրի փորձագետի համար այս դեպքում թերթիկը ստորագրելը մեծ ճնշում էր, բայց նա այլընտրանք չէր տեսնում:

Քննարկեք և համաձայնեցրեք ստորև ներկայացված հարցերը կապված այս սցենարի հետ.

- Մրցույթի ո՞ր կանոններն են (եթե կան) վերաբերում այս սցենարին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն համապատասխան գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի փորձագետը
- Ի՞նչ հարցեր պետք է հաշվի առնել նման խնդրի լուծման համար:

ՄՐՑՈՒՅԹԻ ՄՑԵՆԱՐ - ԱԶԱԿՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար N: 07

Կարգ- փորձագետ

Քննարկման կետ 1

Մրցույթի համապատասխան կանոնները

12.4.7 Ձևաչափերի ստուգումը

Երբ գնահատականները կամ միավորները գնահատման բոլոր ձևաչափերի համար, միավորների անցկացման տվյալ օրը մուտքագրվել են (կամ այն բոլոր գնահատականները կամ միավորները, որոնք ողջ մրցույթի այն հմտությունների համար են սահմանված, որոնք չունեն հատկորոշված գնահատման օրեր) ՄՏՀ-ի միավորների մուտքագրումը տվյալ օրվա համար (կամ ամբողջ մրցույթի) փակվում է: Այնուհետև ժյուրին պետք է ստորագրի գնահատականների մուտքագրման ընդունման ձևաչափը (կամ վերջնական գնահատականի մուտքագրման ընդունման ձևաչափը, Օր 4-ի դեպքում), հաստատելու համար, որ իրենք ընդունել են տվյալ գնահատման օրվա տպագրած գնահատականների ձևաչափը (բացառությամբ այն առարկումների, որոնք առաջադրվել են և պետք է քննարկվեն): Ստորագրված գնահատականի մուտքագրման ընդունման ձևաչափը կամ վերջնական գնահատականի մուտքագրման ընդունման ձևաչափը պետք է ուղարկվեն ՄՏՀ գրասենյակ:

Քննարկման կետ 2 -առաջարկվող գործողություններ

- Եթե փորձագետը դժգոհ է, նա ոչինչ չպետք է ստորագրի, նույնիսկ այն դեպքում, երբ իր վրա զգում է մեծ ճնշում, քանի դեռ տեխնիկական պատվիրակից չի ստացել անհրաժեշտ խորհուրդ:
- փորձագետը պետք է ավելի խորությամբ հասկանա մրցույթի կանոնները, որպեսզի կարողանա ապացուցել, որ իր մրցակիցը չի կորցնի միավոր, եթե մինչև մրցույթի օրվա ավարտը իր կողմից չստորագրվի միավորների նշանակման ձևաչափը:

Քննարկման կետ 3-առաջարկվող գործողություններ

Գնահատականները ստորագրելը և ՄՏՀ մուտքագրելը միշտ ճնշում է առաջացնում: Սա պետք է հավասարակշռության բերվի և փորձագետի պարտավորությունը չպետք է թերագնահատվի, նրան համոզելով, որ իր մրցակիցն արդար վերաբերմունքի է արժանանում:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՅԵՆԱՐ - ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻՎ

Սցենար N: 08

Կարգ - փորձագետ

Անզգուշություն և զայրույթ

Մրցույթի երրորդ օրվա կեսօրն է: Դուք գիտեք, որ ձեր մրցակիցը բարձրորակ աշխատանք է կատարել:

Ա երկրի փորձագետը մոտենում է և դուք տեսնում եք, որ նա շատ մոտ է կանգնում ձեր մրցակցին և գրառումներ անում, մի քանի րոպե հետո Ա երկրի փորձագետը հեռանում է և որոշ ժամանակ անց վերադառնում մեկ այլ փորձագետի հետ: Երկու փորձագետներն այժմ կանգնած են ձեր մրցակցի աշխատանքային տարածքում, ուսումնասիրում են նրան, խոսում, ծիծաղում միասին և գրառումներ անում: Դուք տեսնում եք, որ սա զայրացնում է ձեր մրցակցին:

Քննարկեք և համաձայնեցրեք ստորև ներկայացված հարցերը՝ կապված այս սցենարի հետ.

- Մրցույթի ո՞ր կանոններն են (եթե կան) վերաբերում այս սցենարին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն համապատասխան գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի փորձագետը
- Ի՞նչ հարցեր պետք է հաշվի առնել նման խնդրի լուծման համար

ՄՐՅՈՒՅԹԻ ՍՅԵՆԱՐ- ԱԶԱԿՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար N: 08

Կարգ - փորձագետ

Մրցույթի համապատասխան կանոնները

6.1.22-թվարկված 7-րդ կետը

Մրցակիցներն իրավունք ունեն ակնկալելու, որ պաշտոնատար անձանց կամ հանդիսատեսի կողմից որևէ անտեղի միջամտություն չի լինի, որը նրանց (մրցակիցներին) կիսանգարի ավարտել փորձարկման՝ իրենց նախագիծը:

6.4.3 Անձնական որակներ և էթիկայի չափանիշներ

Փորձագետները պետք է լինեն առավելագույն ազնիվ անձինք: Նրանք պետք է լինեն ազնիվ, օբյեկտիվ, արդար և պատրաստ համագործակցության:

Քննարկման կետ 2 -առաջարկվող գործողություններ

- Մի հանդուրժեք այդտեսակ վերաբերմունք, քանի որ դուք ձեր մրցակցի նկատմամբ ունեք հոգատարության պարտավորություն
- Մոտեցեք փորձագետներին և խնդրեք դադարեցնել իրենց գործողությունները
- Եթե դա շարունակվում է, ժամանակ առ ժամանակ գրանցեք այն դեպքերը, երբ գտնում եք, որ տվյալ Փորձագետների վարքագիծն անընդունելի է
- Ձեր մտահոգությունը քննարկեք գլխավոր փորձագետի հետ և խնդրեք նրանից իրավիճակին արագ լուծում տալ
- Հավաստիացեք, որ որոշումը կատարվել է և վերաբերմունքը փոխվել է գլխավոր փորձագետի հետ ձեր գրույցից հետո
- Եթե դուք դժգոհ եք, տեսնելով, որ որոշակի սահմանված ժամանակահատվածի ընթացքում ոչինչ չի փոխվել, ապա նորից գրույցեք գլխավոր փորձագետի հետ և պատրաստ եղեք հարցն ուղղակի ժյուրիի նախագահին և ձեր երկրի տեխնիկական պատվիրակին ներկայացնելու

Քննարկման կետ 3- առաջարկվող գործողությունները

- Հնարավոր մշակութային տարբերությունները կարող է հանգեցնել ընդունելի վարքագծի տարբեր մեկնաբանումների
- Միշտ պետք է ընդունել, որ սխալ արարքները կարող են կատարվել առանց 'մտածելու' և առանց թաքուն մտադրության:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՅԵՆԱՐ - ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻՎ

Սցենար N: 09

Կարգ - գլխավոր փորձագետ

Տակտիկական միջամտություն - գլխավոր փորձագետի տեսանկյունից

Վարսահարդարության հմտության փորձագետներից մեկը դիմում է ձեզ խորհրդի համար՝ մրցույթի երրորդ օրը պատահած դեպքի առնչությամբ: Վարսահարդարության մրցույթի միավորների սանդղակը նախատեսում է, որ եթե որևէ փորձագետ որևէ բան է ասում իր համաերկրացի մրցակցին մրցույթի ժամանակահատվածում, ապա տվյալ մրցակիցը կորցնում է մեկ միավոր: Դուք և ժյուրիի կազմը համաձայնել եք այս մոտեցման հետ նախքան մրցույթը ֆորումի միջոցով և այն հետևաբար գրվել է միավորների սանդղակում:

Բ երկրի փորձագետը միայն մեկ անգամ տեսնում է, որ Ա երկրի փորձագետը միայն մեկ բառ ասաց Ա երկրի մրցակցին: Տվյալ բառը “կարճ” բառն էր:

Բ երկրի փորձագետն այդ խախտման մասին փաստում է Ա երկրի փորձագետին, որն անմիջապես ներողություն է խնդրում, և ընդունում, որ իր մրցակիցը տվյալ խախտման համար պետք է կորցնի մեկ (1) միավոր: Այնուամենայնիվ, Բ երկրի փորձագետը տեսնում է նաև, որ Ա երկրի մրցակիցը, լսելով կարճ բառը, մանեկենի մազերն ավելի կարճ է կտրում: Եթե Ա երկրի մրցակիցը այդ փոփոխությունը չաներ ապա կորցնելու էր 6 միավոր տվյալ չափանիշը չբավարարելու համար: Բ երկրի փորձագետն իր մտահոգությունն անմիջապես ներկայացնում է ձեզ՝ ասելով, որ սա սխալ չէր այլ տակտիկական միջամտություն, որի միջոցով Ա երկրի փորձագետը գիտակցաբար զոհաբերում է իր մրցակցի 1 միավորը, որպեսզի պահպանվի մնացած 5 միավորը:

Քննարկեք և համաձայնեցրեք ստորև ներկայացված հարցերը կապված այս սցենարի հետ.

- Մրցույթի n ր կանոններն են (եթե կան) վերաբերում այս սցենարին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն համապատասխան գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի գլխավոր փորձագետը
- Ի՞նչ հարցեր պետք է հաշվի առնել նման խնդրի լուծման համար:

ՄՐՑՈՒՑԹԻ ՍՑԵՆԱՐ-ԱԶԱԿՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար 09

Կարգ- գլխավոր փորձագետ

Քննարկման կետ 1

Մրցույթի համապատասխան կանոնները՝

6.3.15 Էթիկայի կանոնների խախտումը

Եթե փորձագետը խախտում է կանոնները, ապա նա ենթակա է բաժին 15-ով նախատեսված կարգապահական գործընթացին

9.2 Գերակայություն

Տեխնիկական նկարագիրը չի կարող գերակա լինել մրցույթի կանոնների նկատմամբ: Անհամապատասխանության բոլոր դեպքերում մրցույթի կանոնները գերակա են:

6.3.14 Քննարկման ֆորումում կայացված որոշումներ

Քննարկման ֆորումում մրցույթի կազմակերպման ժամանակահատվածում կատարված որոշումներն ուժի մեջ են, եթե այդ որոշումները կատարվել են մրցույթի կանոններին համապատասխան:

6.3.9 Համաերկրացի մրցակցի հետ հաղորդակցում

Մնացած բոլոր այլ ժամերին հաղորդակցություն չի թույլատրվում, բացառությամբ ոչ համաերկրացի փորձագետների ներկայությամբ:

6.3.4 Պարտավորությունները-Ժյուրիի նախագահ

Ցանկացած հարց, որը չի կարող լուծվել ժյուրիի կողմից, պետք է դրվի քննարկման ժյուրիի նախագահի կողմից, ժյուրիի նախագահի հաջորդ ժողովին, անհրաժեշտության դեպքում այդ ժողովներին կմասնակցեն գլխավոր փորձագետը և/կամ թարգմանիչը:

Ժյուրիի նախագահները և գլխավոր փորձագետները պետք է հսկեն իրենց փորձագետների աշխատանքի որակը և տեխնիկական հանձնաժողովի նախագահին ու փոխնախագահին խորհուրդ տան, որ այն փորձագետները, որոնք անհամատեղելի են, չնշանակվեն հաջորդ մրցույթի համար:

Քննարկման կետ 2 - առաջարկվող գործողություններ

- Որպես գլխավոր փորձագետ դուք պետք է քննարկեք այս հարցը ձեր տեղակալի և ժյուրիի նախագահի հետ:
- Եթե որոշում չի կայացվում տեղում, ապա դուք պետք է դիմեք ժյուրիի նախագահին հարցը բարձրացնել լսումների հանձնաժողովի նախագահին
- Արդյոք հավատարիմ են մնացել միավորների նշանակման սանդղակին
- Արդյոք պետք է նախագծի տվյալ բաժնի բոլոր գնահատականները հանվեն:
- Արդյոք սա մրցույթի կանոնների միտումնավոր խախտում էր:

Քննարկման կետ 3 - առաջարկվող գործողություններ

- Արդար վերաբերմունք բոլոր մրցակիցների նկատմամբ
- Ժյուրիի նախագահը պետք է հասկանա տվյալ հմտության միավորների սանդղակը և միավոր շնորհելու գործընթացը
- Ժյուրիի նախագահը գլխավոր փորձագետի և գլխավոր փորձագետի տեղակալի աջակցությամբ պետք է երաշխավորի, որ փորձարկման նախագծի համար օգտագործվող միավորների շնորհման համակարգն ու գործընթացը ազատ են կողմնակալությունից և կանխակալ կարծիքից, ազդեցության օգտագործումից, հատուկ վերաբերմունքից, անահատական անազնվությունից, և անփութությունից: Ազդեցությունը հոգուտ մրցակցի օգտագործելու յուրաքանչյուր և բոլոր փորձերը պետք է դիմագրավվեն և դրանց մասին տեղեկացվեն ժյուրիի նախագահին
- Այդ հմտության պատմությունը-արդյոք սա է եղել նորմալ գործընթացը:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՑԵՆԱՐ - ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻՎ

Սցենար N: 10

Կարգ - գլխավոր փորձագետ

Ժպտացեք, դուք նկարահանվում եք:

Բ երկրի փորձագետը տեսնում է, որ հանդիսատեսներից մեկը եռանդուն կերպով տեսագրում է Ա երկրի մրցակցին: 15 րոպե անց այս անձը դեռևս շարունակում է նկարահանել, որը դժգոհություն է առաջացնում մրցակցի մոտ: Բ երկրի փորձագետը որոշում է մոտենալ տվյալ հանդիսատեսին և խնդրել հեռանալ և չխանգարել մրցակիցներին, երբ նրանք աշխատում են: Դժբախտաբար, այս հանդիսատեսը չի խոսում Բ երկրի փորձագետի լեզվով, սակայն Բ երկրի փորձագետի կատարած ձեռքի շարժումներից հասկանում է որ պետք է հեռանա և հեռանում է:

Սակայն ընդամենը 10 րոպե անց այդ նույն հանդիսատեսը վերադառնում և շարունակում է նորից նկարահանել՝ նույն մրցակցին: Բ երկրի փորձագետը նորից խնդրում է նրան հեռանալ, սակայն քիչ անց նա նորից վերադառնում և շարունակում է նկարահանել, որը շփոթեցնում է փորձագետին:

Բ երկրի փորձագետն իր այս դիտարկումների մասին ասում է գլխավոր փորձագետին:

Քննարկեք և համաձայնեցրեք ստորև ներկայացված հարցերը՝ կապված այս սցենարի հետ.

- Մրցույթի ո՞ր կանոններն են (եթե կան) վերաբերում այս սցենարին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն համապատասխան գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի գլխավոր փորձագետը
- Ի՞նչ հարցեր պետք է հաշվի առնել նման խնդրի լուծման համար:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՑԵՆԱՐ - ԱԶԱԿՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար 10

Կարգ - գլխավոր փորձագետ

Քննարկման կետ 1

Մրցույթի համապատասխան կանոնները

6.1.22 թվարկված 7-րդ կետը

Մրցակիցներն իրավունք ունեն ակնկալելու, որ որևէ անտեղի միջամտություն չի լինի պաշտոնատար անձանց կամ հանդիսատեսի կողմից, որը նրանց (մրցակիցներին) կխանգարի ավարտել փորձարկման իրենց նախագիծը:

Քննարկման կետ 2- առաջարկվող գործողություններ

- Հանդիսատեսի կողմից նման համառ վարքագիծ չի կարելի հանդուրժել, քանի որ գոյություն ունի մրցակիցների նկատմամբ հոգատարության պարտավորություն, անկախ նրանից, թե որ երկրից/տարածաշրջանից են նրանք ժամանել
- Գլխավոր փորձագետը պետք է ուղղակիորեն խոսի հանդիսատեսի հետ և եթե առկա է լեզվական խնդիր, ապա անհրաժեշտ է գտնել որևէ մեկին, ձեր խոսակցությունը թարգմանելու համար: Հանդիսատեսին պետք է բացատրել, որ եթե նրանք շարունակեն նման վարքագիծը, ապա կհեռացվեն տարածքից:
- Գլխավոր փորձագետը պետք է իր այս մտահոգության մասին տեղեկացնի ժյուրիի նախագահին, և եթե այն շարունակվի, խնդրի ժյուրիի նախագահին անհրաժեշտ գործընթաց սկսել տվյալ հանդիսատեսին մրցույթի վայրից հեռացնելու համար

Քննարկման կետ 3 - առաջարկվող գործողություններ

- Մշակույթի հնարավոր տարբերությունները կարող են հանգեցնել ընդունելի վարքագծի տարբեր մեկնաբանությունների
- Այս դեպքում հնարավոր է թյուրիմացություն. թերևս անդամ երկրի կամ տարածաշրջանի կողմից հանդիսատեսին հանձնարավել էր նկարահանել մրցակցին ողջ մրցույթի ժամանակ: Հնարավոր է, որ տվյալ հանդիսատեսը մրցակցի ծնողն էր:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՑԵՆԱՐ-ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻՎ

Սցենար N: 11

Կարգ-ժյուրիի նախագահ

Անպատեհ ազդեցություն

Ժյուրիի նախագահին գաղտնի տեղեկացնում են, որ իր պատասխանատվության տակ գտնվող հմտության համար իր գլխավոր փորձագետը չի կատարում իր պարտավորությունները և արտադրամասի՝ իր գրասենյակում օգտագործում է ալկոհոլ:

Ժյուրիի նախագահին առավոտյան այցելում է արտադրամաս և տեսնում, որ մրցույթը սկսված է և բոլոր մրցակիցները աշխատում են իրենց փորձարկման նախագծերի վրա: Մի քանի փորձագետներ հերթապահում են՝ հետևելով մրցակիցներին, ժյուրիի նախագահը այցելում է գրասենյակ և գտնում գլխավոր փորձագետին քնած և նրա սեղանի վրա տեսնում զարեջրի մի քանի դատարկ շիշ:

Քննարկեք և համաձայնեցրեք ստորև ներկայացված հարցերը՝ կապված այս սցենարի հետ.

- Մրցույթի ո՞ր կանոններն են (եթե կան) վերաբերում այս սցենարին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն համապատասխան գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի ժյուրիի նախագահը
- Ի՞նչ հարցեր պետք է հաշվի առնել նման խնդրի լուծման համար:

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՑԵՆԱՐ - ԱԶԱԿՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Մցենար N:11

Կարգ-ժյուրիի նախագահ

Քննարկման կետ 1

Մրցույթի համապատասխան կանոնները

6.4.7 Էթիկայի կանոնների խախտումը

Եթե Գլխավոր փորձագետը խախտում է կանոնները, ապա նա ենթակա է բաժին 15-ով նախատեսված կարգապահական գործընթացներին

6.9.4 Պարտավորությունները-ժյուրիի նախագահը

Ցանկացած հարց, որը չի կարող լուծվել ժյուրիի կողմից, պետք է դրվի քննարկման ժյուրիի նախագահի կողմից, ժյուրիի նախագահի հաջորդ ժողովին, անհրաժեշտության դեպքում այդ ժողովներին կմասնակցեն գլխավոր փորձագետը և/կամ թարգմանիչը:

ժյուրիի նախագահները և գլխավոր փորձագետները պետք է հսկեն իրենց փորձագետների աշխատանքի որակը և տեխնիկական հանձնաժողովի նախագահին ու փոխնախագահին խորհուրդ տան, որ այն փորձագետները, որոնք անհամապատասխան են, չնշանակվեն հաջորդ մրցույթի համար:

5.1 Առողջապահություն և անվտանգություն

Քաղաքականությունները և գործընթացները

Քննարկման կետ 2- առաջարկվող գործողությունները

- Ժյուրիի նախագահը պետք է անմիջապես իր մտահոգությունը քննարկի գլխավոր փորձագետի հետ՝ կապված նրա անընդունելի վերաբերմունքի հետ
- Ժյուրիի նախագահը պետք է գլխավոր փորձագետի երկրի/տարածաշրջանի տեխնիկական պատվիրակից պահանջի, գլխավոր փորձագետի վարքագծի անհապաղ և երաշխավորված փոփոխություն
- Եթե որևէ անհապաղ բարեփոխում տեղի չի ունենում, ապա ժյուրիի նախագահն այս հարցով պետք է դիմի տեխնիկական հանձնաժողովի նախագահին, և փոխնախագահին

Քննարկման կետ 3-առաջարկվող գործողությունները

- Ժյուրիի նախագահի համար այս հարցը բաց ֆորում ներկայացնելը տեղին չի լինի, քանի որ այն կարող է անհարմար կացության մեջ դնել ընդգրկված անդամին
- Գլխավոր փորձագետի նման վարվելակերպի համար կարող են լինել մեղմացուցիչ հանգամանքներ, հնարավոր է, որ սա ոչ սիստեմատիկ վարքագիծ է, որն ընդամենը մեկ անգամ է տեղի ունեցել

ՄՐՑՈՒՅԹԻ ՍՑԵՆԱՐ - ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻՎ

Սցենար 12

Կարգ-ժյուրիի նախագահ

Արդար մոտեցում

Մրցույթի երկրորդ օրվա առավոտյան որմնադիրների հմտության ժյուրիի նախագահին Ա երկրի տեխնիկական պատվիրակներից մեկը խիստ զայրացած տեղեկացրեց որ, այն մրցակիցներին, ովքեր իրենց հետ բերել էին այլումինե ուղղորդիչներ, թույլատրվել է տեղադրել դրանք նախքան մրցույթը սկսելը:

Այն մրցակիցները, ովքեր չէին բերել ուղղորդիչներ, ստիպված են օգտագործել փայտե ուղղորդիչներ՝ տրամադրված հյուրընկալող կազմակերպության կողմից, ինչպես նաև՝ նրանց չէր թույլատրվել տեղադրել փայտե ուղղորդիչները մինչև մրցույթը սկսելը: Տեխնիկական պատվիրակը զայրույթով նշեց, որ իր մրցակիցը մոտավորապես 30-40 րոպեի կորուստ է ունեցել: Նա ցանկանում է որպեսզի ժյուրիի նախագահն անմիջապես ուղղիչ գործողությունները ձեռնարկի այդ խնդիրը կարգավորելու համար:

Քննարկեք և համաձայնեցրեք ստորև ներկայացված հարցերը՝ կապված այս սցենարի հետ.

- Մրցույթի ո՞ր կանոններն են (եթե կան) վերաբերում այս սցենարին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն համապատասխան գործողությունները, որոնք պետք է ձեռնարկի ժյուրիի նախագահը
- Ի՞նչ հարցեր պետք է հաշվի առնել նման խնդրի լուծման համար:

ՄՐՑՈՒՅԹԻ ՄՑԵՆԱՐ-ԱԶԱԿՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Սցենար N:12

Կարգ-ժյուրիի նախագահ

Քննարկման կետ 1

Մրցույթի համապատասխան կանոնները

6.1.22 Մրցակիցները-ազնվություն, արդարություն և թափանցիկություն

Մրցակիցները իրավունք ունեն մրցույթի ժամանակ ակնկալել արդար և ազնիվ վերաբերմունք՝ կապված հետևյալի հետ.

- Յուրաքանչյուր մրցակից իրավունք ունի ակնկալել, որ ոչ մի մրցակցի չի ցուցաբերվի անարդար օգնություն կամ միջամտություն, որը նրան կարող է առավելություն տալ

6.1.5 Մրցակիցներ-իրավունքներ և պարտավորություններ

Մրցակիցներ-նախքան մրցույթը

Տեխնիկական պատվիրակը (իրենց անդամ կազմակերպության օժանդակությամբ) պարտավոր է հավաստիանալ, որ բոլոր համաերկրացի մրցակիցներին տրվել է հետևյալ տեղեկատվությունը՝ գործիքների համառոտ ներկայացում և լրացուցիչ այլ սարքավորումներ և նյութեր, որոնք նրանք պետք է վերցնեն:

6.3.6 Գործիքների արկղերի ստուգումը

Ամեն օր փորձագետների մի խումբ, պետք է մանրակրկիտ ստուգի բոլոր գործիքների արկղերի պարունակությունը: Այս ստուգումը պետք է երաշխավորի, որ ցանկացած իր, որը կարող է անարդար առավելություն տալ որևէ մրցակցի պետք է մրցույթից հեռացվի: Մրցակիցը պետք է մասնակցի գործիքների արկղի ստուգմանը և կասկածի կամ չտույլատված սարքավորում հայտնաբերելու դեպքում, այս մասին անմիջապես տեղեկացվում է մրցակցին և համաերկրացի փորձագետին:

Քննարկման կետ 2 - առաջարկվող գործողություններ

- Ժյուրիի նախագահը պետք է քննարկի տվյալ հանգամանքները գլխավոր փորձագետի և գլխավոր փորձագետի տեղակալի հետ: Ժյուրիի նախագահը պետք է շեշտը դնի հիմնական փաստերի, և ոչ թե զգացմունքի վրա:
- Ժյուրիի նախագահը պետք է տեղյակ լինի, թե որ սարքավորումն է նախատեսված օգտագործման համար, և երբ պետք է այն օգտագործվի:
- Ժյուրիի նախագահը գլխավոր փորձագետի հետ միասին պետք է լուծում գտնի երաշխավորելու համար, որ բոլոր մրցակիցներն իրոք ունեն հավասար հնարավորություններ հաջողությունների հասնելու համար
- Տեղում որոշման չհանգելու դեպքում, ժյուրիի նախագահն այդ հարցը պետք է բարձրացնի տեխնիկական հանձնաժողովի ժողովում և օժանդակություն խնդրի տեխնիկական հանձնաժողովի նախագահից և տեղակալից վերջնական որոշման համար:

Քննարկման կետ 3 - առաջարկվող գործողություններ

Տվյալ խնդրի փաստերից առանձնացրեք զգացմունքայինը և հումորայինը: Տեխնիկական պատվիրակներին տեղյակ պահել հետագա գործողությունների և հնարավոր որոշումների մասին: